ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

<u>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2022/59, 13.04.2022թ.

Բողոք բերող անձ՝ «Խաչպար» ՍՊԸ

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/28»

Գնման առարկան՝ լաբորատոր ազդանյութերի և պարագաների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/28» ծածկագրերով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել ընթացակարգը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն

օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

ԲՈՂՈՔ

1) **Բողոք բերող անձ՝** <<Խաչպար>> ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Ռաֆֆու 33/7
2) **Պատվիրատուի անվանումը՝** ՀՀ ՊՆ
Հասցե՝ ք. Երևան, Բագրևանդի 5

3) **Գնանշման հարցման ծածկագիրը՝** « ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/28»
և առարկան՝ <<Լաբորատոր ազդանյութերի և պարագաների ձեռքբերում>>

4) **Վեճի առարկան և բողոք ներկայացնող անձի պահանջը՝**

Տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ ՊՆ-ն << Լաբորատոր ազդանյութերի և պարագաների>> ձեռքբերման նպատակով Հայտարարություն է հրապարակել <<ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/28>> ծածկագրով գնանշման հարցման մասին, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2022 թ. ապրիլի 4-ի թիվ 1 որոշմամբ (կից փաստաթուղթ թիվ 1), որտեղ ռուսերեն լեզվով հրապարակված է միայն <<ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/28>> ծածկագրով ընթացակարգի Հայտարարությունը, իսկ Հրավերը ռուսերեն լեզվով հրապարակված չէ, թույլ տալով ՀՀ Կառավարության 04 մայիսի 2017թ. թիվ 526-Ն որոմամբ հաստատված Կարգի 34-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջի խախտում:

<<Խաչպար>> ՍՊԸ-ն՝ ղեկավարվելով ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի թիվ 46 հոդվածի 1-ին մասով և 3-րդ մասի 1-ին կետով, բողոքարկում է Պատվիրատուի՝ ՀՀ ՊՆ-ի <<ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/28>> ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 2022թ. ապրիլի 4-ի թիվ 1 որոշմամբ հաստատված՝ <<Լաբորատոր ազդանյութերի և պարագաների>> ձեռքբերման նպատակով հայտարարված <<ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/28>> ծածկագրով գնանշման հարցման Հրավերի ընթացակարգը, և դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրում է Ձեզ՝ ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ Օրենքի թիվ 50 հոդվածի 7-րդ մասով՝

Ընդունելու որոշում, որը կպարտավորեցնի ՀՀ ՊՆ-ի <<ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/28>> ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝ ընդունելու համապատասխան որոշում՝ <<ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/28>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:

5) բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝

Համաձայն 2019 թվականի հոկտեմբերի 10-ին ՀՀ Կառավարության կողմից ընդունված՝ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 4-Ի N 526-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-Ի N 1454-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ N 1422-Ն ՈՐՈՇՄԱՆ >> թիվ 11-րդ կետի՝ 526-Ն որոշմամբ հաստատված Կարգի 34-րդ կետի 1-ին ենթակետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝

<<34. Գնումների մասին հայտարարության և հրավերի կամ նախաորակավորման մասին հայտարարության տեքստերը հաստատվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարը՝

1) գնումների մասին հայտարարության և հրավերի կամ նախաորակավորման մասին հայտարարության տեքստերը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի սահմանած կարգով հրապարակում է տեղեկագրում: Ընդ որում հայտարարության և հրավերի տեքստերը, ինչպես նաև գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, պայմանագիր կնքելու, կնքված պայմանագրի և ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունները հրապարակվում են նաև ռուսերեն լեզվով: Ռուսերեն լեզվով հրապարակված նյութերի տարաբնույթ (երկակի) մեկնաբանման հնարավորության դեպքում հիմք է ընդունվում հայերեն տեքստը.>>

<<ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/28>> ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի կողմից չի կատարվել ՀՀ Կառավարության 04 մայիսի 2017թ. թիվ 526-Ն որոմամբ հաստատված Կարգի 34-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված այն պահանջը, համաձայն որի՝ <<.... **հրավերի տեքստերը .... հրապարակվում են նաև ռուսերեն լեզվով:...>>:**

6) Կից ներկայացնում եմ բողոքարկման վճարի անդորրագիրը:

Առդիր՝ 1 թերթ:

<<Խաչպար>> ՍՊԸ տնօրեն Սմբատ Բալասանյան

13 ապրիլի 2022թ.

E-mail: khachpar.llc@gmail.com

Հեռախոս՝ 091-45-90-45

<<Ինեկոբանկ>> ՓԲԸ, հ/հ 2050922055871001